ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎՐԱՑ

(Տես էջ 114. — Վերջ)։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Թագաւորել Դաւթի՝ որդւոյ Գէորգեայ։ — Գալուստ խաչակրաց յԱրևելս, և բարեկարգել Դաւթի զկիսոցիս վրաց. — Նուռաձէ Դաւթիք զապատամբորիսն Թուրքաց, և խնամեցեալ ընդ Յոյնս և ընդ Հոռս՝ ընկէզէ և զՕաս. — Ա.Յ և ա.տարուրիւնք նորա ընդդէմ Պարսից և Թուրքաց.— Պատերազմն Դաւթի ընդդէմ բազաւորին Արաբացւոց և Յաղտանին Միւսգետաց, և տիրել բերդաց ինչ Հայոց և քաղաքին Անւոյ. — Ուղղորդիւնք Դաւթի և փոյթ կատաց նորա միաբանելոյ զՀայս և զվիրս. — Մեծարէ Դաւթ զՊարկաւագ վարդապետ և օրհնի 'ի նմանէ, և հիւանդացեալ՝ փոխի յատենացս։

Բայց ոչ իսպառ բարկացաւ Տէր, և ոչ յաւիտեան պահեաց ոխս. այլ գթացաւ իբրև Հայր յորդիս, և ետ մեզ զաւակ, զի մի լիցուք իբրև զՍոդոմ և զԳոմոր, և յարոյց մեզ զեղջիւր փրկութեան 'ի տանէ Դաւթի, զԴաւիթ՝[1] զոր, զի Գէորգեայ, միածին, 'ի Նոյն իսկ յայզէ աստուածահօրն Դաւթի, 'ի բագրատունի տանէ. զոր Հայրն իւր Գէորգի պսակեաց 'ի ծերութեան իւրում. զնշմարիտն ասել՝ Հայրն երկնաւոր առ նա ասացեալ՝ Գոտի զԴաւիթ ծառայ իմ, և իւղով սրբով իմով օծի զնա. ձեռն իմ ընկալցի զնա, և բազուկ իմ զօրացուցէ, այլովքն հանդերձ[2]։ Եւ եղև մեզ առաւօտ, և չընչեաց 'ի մեզ հոգի կենդանութեան, և ել փչող՝ աշխատեալ երեսաց մերոց[3]։ Եւ էր նա ամաց վեշտասանից, և լի հանճարով իմաստից. քանզի զորդին Լիպարան՝ զիւանէ եգիպտ ապստամբ, և զկնի դառնալոյն 'ի գերութենէ՝ կալաւ զնա և եդ 'ի բանտի՝ զի խրատեսցի. և դարձեալ եհան 'ի կապանաց, և 'ի Նոյն մեծութեանն պատուէր զնա։ Եւ իբրև դարձաւ որպէս զչուն 'ի փրխածն՝ վերստին ըմբռնեաց զնա, և առաքեաց առ Յոյնս։

Ի չորրորդումամի թագաւորութեանն Դաւթի՝ մեռաւ Մէլիք-Շահ Սուլտանն։ Եւ ելին փառանկք, և աաին զերբուսաղէմ և զԱնտաք և զամենայն ծովեզերեայսն։ Եւ զօրացաւ Դաւիթ, և շինեցաւ Քարթլայ տունն, և ոչ տայր հարկս Թուրքաց։ Մեռաւ Կիւրիկէ Թագաւորն Կախեթոյ, և էառ զթագն եղբօրորդի նորա Ապսիարթան։ Հայեցաւ Դաւիթ իմաստութեամբն յեկեղեցիս, զի ոչ գոյր նոցա ճրագ. այլ առաջնորդք կոյրք և զօշաքաղք, այլ և աւազակք, որք ընդ որմ և ընդ երդս մտանէին, և ոչ հովուաբարբնդ դրունս։ Այսպէս էին 'ի ժամանակին եպիսկոպոսք. և ձեռնադրէին քահանայս կաշառաւք՝ Նմանս իւրեանց, և կացուցանէին քորեպիսկոպոսս անմիտս և ագահս, և տնկէին զանօրէնութիւն 'ի տան Աստուծոյ։ Եւ ակն մեծ՝ հայէր և ոչ հաճէր. քանզի ոչ որպէս մեզք յեկեղեցիս և յաշխարհիս, հովուաց և խաչանց, վարդապետաց և ռամկաց. այլ ծառայ՝ որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ և սխալէ՝ արբցէ գան բազում։ Վասն որոյ հաւաքեաց առ ինքն զկաթուղիկոսն եւ զեպիսկոպոսունն եւ զքահանայս անզգամացեալս. և հրամայեաց ընտրութիւն առնել 'ի մէջ լաւին և վատթարացն, և արտաքսել զանարժանսն, և տեսանել զկանոնական հրամանսն, և այնպէս վարել զասել. Mon bras lui donnera de la force, *avec ce qui suit.*

1 Յիսներորդ վեցերորդ արքայ, բագրատունի, իշխեաց զամն 36, 'ի 1089–1125։

2 Պրոսէ Թարգմանէ, Mon bras *et d'autres* lui donneront de la force, *ոչ 'ի վերայ հաւատալ իմաստից այլովքն հանդերձիւ, որով ունէր*

զի. և դարձեալ եհան 'ի կապանաց, և 'ի Նոյն մեծութեանն պատուէր զնա։ Եւ իբրև դարձաւ որպէս զչուն 'ի փրխածն՝ վերստին ըմբռնեաց զնա, և առաքեաց առ Յոյնս։

Ի չորրորդումամի թագաւորութեանն Դաւթի՝ մեռաւ Մէլիք-Շահ Սուլտանն։ Եւ ելին փառանկք, և աաին զերբուսաղէմ և զԱնտաք և զամենայն ծովեզերեայսն։ Եւ զօրացաւ Դաւիթ, և շինեցաւ Քարթլայ տունն, և ոչ տայր հարկս Թուրքաց։ Մեռաւ Կիւրիկէ Թագաւորն Կախեթոյ, և էառ զթագն եղբօրորդի նորա Ապսիարթան։ Հայեցաւ Դաւիթ իմաստութեամբն յեկեղեցիս, զի ոչ գոյր նոցա ճրագ. այլ առաջնորդք կոյրք և զօշաքաղք, այլ և աւազակք, որք ընդ որմ և ընդ երդս մտանէին, և ոչ հովուաբարբնդ դրունս։ Այսպէս էին 'ի ժամանակին եպիսկոպոսք. և ձեռնադրէին քահանայս կաշառաւք՝ Նմանս իւրեանց, և կացուցանէին քորեպիսկոպոսս անմիտս և ագահս, և տնկէին զանօրէնութիւն 'ի տան Աստուծոյ։ Եւ ակն մեծ՝ հայէր և ոչ հաճէր. քանզի ոչ որպէս մեզք յեկեղեցիս և յաշխարհիս, հովուաց և խաչանց, վարդապետաց և ռամկաց. այլ ծառայ՝ որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ և սխալէ՝ արբցէ գան բազում։ Վասն որոյ հաւաքեաց առ ինքն զկաթուղիկոսն եւ զեպիսկոպոսունն եւ զքահանայս անզգամացեալս. և հրամայեաց ընտրութիւն առնել 'ի մէջ լաւին և վատթարացն, և արտաքսել զանարժանսն, և տեսանել զկանոնական հրամանսն, և այնպէս վարել զասել. Mon bras lui donnera de la force, *avec ce qui suit.*

3 Պրոսէ ունի, *կարծեմ վրիպակաւ.* Շնչեաց *'ի մեզ հոգեւ կենաց, և որ շնչէրն 'ի մեզ զաշխատութիւն հնացաւ յերեսաց մերոց։*

digitised by A.R.A.R.@

տիճանս յեկեղեցի և տալ հրաման ախմարաց։ Եւ արարին այնպէս ըստ հրամանին աստուածային գրոց, և լա-ւացն եռուն զսիթոան, և զխոտանսն 'ի բաց հանին. որպէս 'ի յուռկանաց զանկերակրելիսն և զզարշն։ Եւ զայս արարեալ իբրև զՄիծն կոստանդիանոս, և այժ առեալ յԱստուծոյ՝ եհար սակաւուք զրազմութիւն զորացն Թուրքաց, և կորեաց զերթեկեանոցա յաչխարհէս քրիստոնէից։ Քանզի եւ նմա ՝ի ՝ի զխոստանն արգարոց, զի մինն զհազարսն և երկուքն զրերան հալածէին. քանզի ոչ որպէս եղիազարոս Աւարան[1], որ արեամբ թշնամեացն մատղեալ ընդարմանայր, այլ և զծոցն ևս լցեալ արեամբ՝ դառնայր ամբողջ, և արձակեալ զգօտին՝ թափէր և թեթևանայր։ Այլ և չինող վանորէից և եկեղեցեաց. որպէս և չինեաց 'ի վայելուչ տեղւոջ երկու տաճար՝ յանուն սուրբ Աստուածածնի. և ինքնին երթեալ տեսանէր զվանորայսն, զկարգս պաշտամանց և զհնդիսատ հիւրանոցացն, և ընոյր զպակասն. չինեաց 'ի տեղիս տեղիս հոգոյ տունս՝ 'ի հանգիստ ճանապարհորդաց։

Ցայնմ ժամանակի ապատամբեցին Թուրքք իբրև տասն հազար 'ի Թռեղս. և Դաւիթի էր 'ի Նաճարմագ. իբրև լուաւ զնոցանէ՝ եկն առ նոսա զդիւրն ամենայն՝ սակաւ զօրք, և 'ի ժամ՝ առաւօտուն եհար զնոսա օգնութեամբն Աստուծոյ՝ մինչև ցերեկոյ. և սակաւ մնացեալ փախեան զդիւրն։ Նոյնպէս և 'ի Ցայոց երկիրն իջեալ կային բիւրաւոր բանակք Թուրքաց. չոքաւ եհար զնոսա, և էառ զկարասի նոցա, և լցաւ երկիրն Վրաց բարութեամբ։ Եւ առաքեաց զորդի իւր զԴեմետրէ 'ի կողմն Շրուանայ. և աղողեցաւ նմա. և առեալ զբերդն Քալանոր, և զարձաւ խնդութեամբ։ Եւ մինչ կատարէր զսոն Զատկին 'ի Նախէդրանն մեծն Դաւիթի, բերին նմա զրոյց եթէ սպանին զբէշկէն 'ի Ջաւախեթի՝ Թուրքքն, և եկին նոտան յեզրն Երասխայ։ Եւ գնաց 'ի վերայ նոցա, և կոտորեաց և գերեաց զամենայն բանակս նոցա։ Վրար Դաւիթի խնամութիւն ընդ թագաւորսն Ցունաց և Շրուանայ, տալով նոցա զդստերս իւր, և արար իւր թիկունս օգնականի։ Եւ կին նորա Գուրանդուխտ՝ դուստր էր կիւրապաղ գլխաւորին, այսինքն՝ Հոնաց՝ Ամրակայ. և նոցա օգնականութեամբն հնազանդեցոյց զմագաւորսն Օսեթիայ. և էառ պատանդս 'ի նոցանէ, և արար խաղաղութիւն 'ի մէջ Օսաց և Հոնաց. և էառ զբերդն Դարիալայ, և զամենայն գրունս Օսեթիայ 'ի Կուկասու լեռան, ածելով անտի կիւրապս, որ կոտորեաց զզօրութիւնս Թուրքաց։ Էառ և զբերդսաքաղաքն Հայոց՝ զԼաէ. յորում ժամանակի մեռաւ Մաղիքն՝ որդին Մէլիք-Շահի, և Ալէքս՝ թագաւոր Ցունաց. մեռաւ և Ճղունդիանէն Գիորգի՝ միամիտն[2] 'ի մանկութենէ. և ապայ զնա թագաւորն քանի աւուր՝ ամենայն թագաւորութեամբն, և թաղեաց զնա 'ի Նոր վանքն։

Իսկ զկիւրապն քառասուն հազար տամբ և որդւովք՝ առ իւր պահեաց 'ի Վրաց աշխարհին, և այլ ևս հինգ հազրիւր մատաղատունկս, զորս մնուցանէր 'ի դրան իւրում՝ քրիստոնեայս, և այլ ևս օր ըստ օրէ մկրտէին, և ուսանէին զհաւատս Ցեառն մերոյ։ Եւ ապառազիներեաց զքառասուն հազարսն, և կացոյց նոցա սպասալարս, և նոքաք զմանէր զՊարսք և զԹուրքաստան։ Եւ է ասել զնա նման ընձու սրընթաց և

1 Ցորենակին գնի. Եղիազարոս աւարառն, ըստ որում և Պրոսէի զմակդիր անուն եղեալ զարս (Ա. Մակ. Զ. 43) թարգմանեալ գոյականաբար խրթնագոյն ևս ընծայէ զիմաստն՝ ընթեռնլով և զմատղեալն մատչել և զրնդարմանայսն՝ ընդարմանայր, որով գնէ. Au lieu de piller comme Eléazar, il allait en avant, et se fortifiait dans le sang ennemi.

2 Ալ.ոնէն հաւատարիմն հպատակութեամբ. որ ըստ վկայելոյ Վախթանգայ՝ էր այր կատարեալ, Հոխացեալ Հրէից մտաց և մարմնոյ։ Իմաստուն յոյժ և զգօնամիտ, խրատատու խորագէտ, գլուխ ատենագրաց Դաւիթի և անձնանուէր 'ի Ծառայութեան տերանց իւրոց։

digitised by A.R.A.R.@

արագահաս, որով զԱղեքսանդր՝ նկարագրէր տեսիլն Դանիելի. որ ոչ էր պակաս 'ի նմանէ մերս Աղեքսանդրոս, թէպէտ ժամանակաւ կրսսեր, այլ բաղդիւ համեմատ. քանզի եհար զԹուրքն 'ի ձմերոցն Թուղարքայ, և լցաւ աւարաւ. յերեքտասանն փետրուարի և 'ի նոյն[1] յեօթնեակս պահոցն՝ էառ զկապաքաղաքն, և ելից զվիրս ոսկւով և արծաթով. և 'ի մայիսի հինգ՝ առպատակեաց զԼայիժքն, մինչև ցՔուրդաւան և և ցԽշտալան, և դարձաւ ճոխութեամբ 'ի Քարթլ։ Եւ 'ի նոյն ամի գնաց յԱչորնիս, և եհար զբանակս Թուրքացն, մինչև չմնալ ազացող 'ի վրանս նոցա. և 'ի ժամանակս ձմերան չոգաւ յԱփխազէթ՝ մինչև ցԲինճիթա, և կարգաւորեաց զնոսա։ Եւ զի Թուրքմանն յամարինան ելանէր 'ի լերինս Հայոց, և 'ի ձմեռնայինն իջանէր յեզերսն կուր գետոյ 'ի մարմանդ, բայց ոչ առանց բազում պատրաստութեան յերկիւղէն Դաւթի. իսկ յայնմ ամի անհոգացան վասն հեռաւորութեան թագաւորին. դարձաւ թագաւորն, և քերել ետ առաջի իւր զլեառն Լիխայ, և եկն 'ի Քարթլ. և եգիտ պատրաստական զզօրսն յամսեանն մարտի, և գնաց 'ի խունան, և ոչ եթող 'ի բազմութենէ Թուրքացն ապրել։ Եւ էանց 'ի Պարտաւ, և եգիտ անդ զայլթականս 'ի Թուրքաց 'ի գեղամէջս, և եհար զնոսա բերանով սրոյ և դարձաւ խաղաղութեամբ։

Յայնմ ժամանակի վաճառականք ոմանք 'ի Դմանեաց և Տփխեաց՝ կողոպտածք 'ի յազգէն Թուրքաց, և այլ ևս մնացորդք 'ի հարելոց անտի, սևեցին զհանդերձս և կէսք զերեսս և ոմանք զձեռս և զոտս, և չոգան առաջի Սուլտանին՝ վայ կարդալով անձանց՝ յերեսաց Դաւթին. Եւ կոչեաց առ ինքն Սուլտանն զԹագաւորն Արաբացւոց, և զորդին Ալտուխին և զամենայն Ամիրայսն Միջագետաց, և առաքեաց զնոսա 'ի վերայ Դաւթի։ Եւ յօգոստոսի երկոտասան՝ եկին հասին 'ի Թռեղս, 'ի Մանկլիս և 'ի Դիդգօրքն։ Իսկ թագաւորն օգնական կոչելով զՅիսուս զԱստուածն մեր՝ դիմեաց 'ի վերայ նոցա հանդարտութեամբ. և զառաջինն ընկէց 'ի յաւտգացն և դարձոյց 'ի փախուստ. և զհետ մտեալ՝ ճարակ սրոյ տայր զամենեսեան զնոսա, դէշ զազանաց և թռչնոց կացուցանելով զնոսա ընդ լերինս և դաշտս. և լցան ձիօք և ուղտօք և ջորւօք և կահիւք Արաբացւոց, և գերութեամբ ազնուական Ամիրայիցն։ Եւ ո՞ր լեզու կարէ պատմել զաւուրն զհրաշսն՝ զոր ետ մեզ կեցուցիչն Քրիստոս։ Եւ զի՞նչ են ինձ Հոմերոսի և Արիստոտելի պատմելն զՏրովականն[2] պատերազմն և քաջութիւնն Աքիլլայ, և կամ զՅովսեպոսին՝ զքաջութիւնն Մակաբայեցւոց և զԱղեքսանդրուն գրել և կամ զՏիտոսին յԵրուսաղէմ. քանզի զչորեքհարիւր ամ ոչ կարացին զՏփխիս Թագաւորքն Վրաց սեպհականել միահաղոյն՝ մինչև ցԴաւիթ։ Յաւուրսն յայնոսիկ չոգաւ Սուլտանն 'ի Շրուան, և էառ զՇամախի, և ըմբռնեաց զՇրուան-Շահ. և արձակեաց դեսպանս առ Դաւիթ, և ասէ. Ողջ լեր, արքայդ խորագոյն մայրեաց, որ ոչ իշխես ելանել յորջիցդ. եթէ կամիս՝ եկ 'ի դարանէդ և տես զիս աստ, և թէ ոչ՝ առաքեա առ իս զհարկն իմ և գնամ։ Իբրև լուաւ թագաւորն՝ հրամայեաց հեծելոց, և հաւաքեցաւ ամենայն բազմութեամբ ուժոյ իւրոյ, և չոգաւ առ նա։ Իբրև լուաւ Սուլտանն՝ զահի հարաւ, և մըտաւ 'ի քաղաքն Շամախի, և ամրացոյց խոր փոսիւք. և առաքեաց առ նա և ասէ. Ոչ խնդրեմ 'ի քէն հարկս և ոչ պատերազմ, այլ ճանապարհ զի գնացից[3]։ Ի նմին ժամանակի Աթապակն Ռանայ՝ Ասխանդուլն զայ-

1 Պրոսէ ունի. Ի նմին ամի, յեօթնեակս պահոցն, և այլն։

2 Յօրինակին՝ զտովրդականն, ըստ որում Թարգմանէ և Պրոսէ. այլ ուղղագոյն և բանաւոր ինձ թուի ընթեռնուլ զՏրովականն։

3 Յօրինակին՝ այլ ճանապարհ զի գնացից 'ի նմա ժամանակս։

digitised by A.R.A.R.@

տան հազարաւ առ Սուլտանն. և հաւրին զնա զօրքն Դաւթի, և ինքն մաղապուր եմուտ առ Սուլտանն. և նա զարհուրեալ Սուլտանն՝ ընդ այլ ճանապարհ գաղտագնաց եղև 'ի գիշերի յաշխարհն իւր. և Թագաւորն յերկիր իւր դառնայր: Եւ զկնի ամսոյ միոյ՝ անդրէն դառնայր 'ի Շրուան. և առնոյր զԳուլստան բերդ՝ զարքայանիստն, և արարեալ զաշխարհն ընդ հարկաւ՝ դառնայր 'ի Վիրս: Նա էառ և զդղեակսն Հայոց՝ զԴմանիս, զԳագ, զՏէրունականն, զՔաւաղինն, զՆորբերդն, զՄանասագոմ, զխալինճքար. և անցեալ 'ի կողմն վերին 'ի Բասեն և յիսպեր՝ ուր և գտանէր 'ի Թուրքաց՝ կոտորեալ ջնջէր, և դառնայր մեծաւ յաջողմամբ 'ի Վիրս՝ յօգոստոս ամսեան: Եւ հասանէր առ նա թուղթ 'ի յաւագացն Անւոյ՝ եթէ ե՛կ, տացուք զքաղաքս 'ի ձեռս քո. և գնաց վաթսուն հազար հեծելովք, և զկնի երից աւուրց էառ զնա. և դարձաւ 'ի Շրուան, և էառ զքաղաքն Շամախի, և զամենայն երկիրն. և թողեալ զօրս 'ի Հեր և կախ, և գործակալ երկրին զՍիմէոն հաւատարիմն իւր, և դարձաւ 'ի Քարթլ:

Եւ զո՛րս պատմեսցուք 'ի նորայոցն բարեաց. զի շինեաց զամենայն մասունս արևելից և ելից բնակչօք: Էր նա և ըստ հոգւոյ զգաստ և արի, և ընթեռնոյր զամենայն մատեանս աստուածայինս, և յորժամ աշխատէր ակն՝ լսէր ականջօք զպայգ և զցերեկ. զի ոչ քուն խափանէր զնա 'ի գիշերի, և ոչ հոգք աշխարհի՝ 'ի տունջեան, և ոչ հեշտութիւն՝ 'ի ժամ ճաշոյ և ընթրեաց: Էր նա և ողորմած և աղէկէզ 'ի վերայ քրիստոնէից. քանզի մինչ էր Տփխիս առ Թուրքաց, և յամենայն աւուր լնոյր արեամբ քրիստոնէից, որ բնակքն էին և որ արտաքուստ մտանէին վաճառականք. վասն որոյ ոչ հանգեաւ մինչև ոչ եբարձ[1] զգայթակղութիւնն քրիստոնէից. և օգնութեամբն Քրիստոսի արար հարկատու զՍուլտանն՝ զապականիչն աշխարհի. և նստոյց 'ի մոխրի զազգն իսմայելի, և որպէս մարդ անասնոյ՝ այնպէս նա տիրեաց բռնաւորաց աշխարհի: Էր և պահող պինդ և աղօթող յերկար, և յեկեղեցիս ընծայող, մինչև 'ի Յունաց աշխարհն և 'ի Կիլիկիա և 'ի Կիպրոս և 'ի Սուրբ Երուսաղէմ. և 'ի Լեառն Սինա շինեաց վանք, և գանձ բազում հազարաւոր և բիւրաւոր առաքէր ամի ամի, այլ և դրեան և սպաս սրբութեանց, զոր ո կարէ համարել: Այլ և կամեցաւ միաւորել զՀայս և զՎիրս. և կոչեաց զՅովհաննէս կաթուղիկոս Քարթլայ և զԱրսենիոս Քարթլեցի՝ զթարգմանն Վրաց և Յունաց լեզուին, և զեպիսկոպոս և զվարդապետս Հայոց, և արար ժողով. և քննէին յառաւօտէ մինչև ցերեկոյ, և ոչ հաւանէին միմեանց: Ապա ասէ Թագաւորն. Մեք անվարժ եմք 'ի խորագոյն բանսդ՝ զոր արկեալ էք առաջի, և ոչ կարէք դուք ելանել 'ի դուրս: Եւ ինքն պարզ և յայտնի բանիւ խաղաղացուցեալ զերկոսին կողմանսն՝ արձակեաց զժողովն:

Այլ ինքն սիրէր զազգն Հայոց և զեկեղեցիսն և զոմն հռետոր վարդապետ 'ի Հաղբատ՝ Սարկաւագ անուն. խոստովանէր նմա զյանցանս իւր, և կորացուցեալ զպատուական գլուխն՝ օրհնէր 'ի նմանէ. և նստէր ընդ նմա և փարէր զպարանոցաւ նորա. և նա ասէր. Լուծեալ եմ և հոտեալ 'ի ծերութեան ես. 'ի բաց գնա յինէն՝ զի մի աշխատ լինիս: Եւ Թագաւորն համբուրէր և ասէր. Անպակաս լիցի հոտս այս յինէն, հայր պատուական: Եւ պարգևեաց նմա գիւղ առընթեր վանացն՝ 'ի ծառայութիւն նմա: Եւ 'ի յօրհնելն զԹագաւորն՝ զայս ասէր՝ եդեալ զձեռս 'ի վերայ գլխոյն. Գտի զԴաւիթ ծառայ իմ, և իւղով սրբով օծի զնա մինչև ցտասներորդ տուն: Եւ զուարճանայր արքայն. և գովէր զգեղեցկակերպ թարգմանութիւնն Հայոց[2]: Եւ տեսաք

1 Յօրինակին չիք ոչ եբարձ:

2 Այս ամենայն բանք զազգէս Հայոց՝ Թուլին

digitised by A.R.A.R.@

արդեամբ կատարեալ զբան աղմնին 'ի վերայ թագաւորին. և յոլովք 'ի բանից անտի վայելէին նմա. քանզի 'ի բազում որոգայթից Աստուծով զերծեալ ապրեալ՝ անկարծելի մարդկան։ Զի երբեմն 'ի յորս երէոց անկեալ յերիվարէն՝ դնէր անխլիրտ իբրև զմեռեալ, և ապա յառնէր խորհրդոյն [1] զորութեամբն։ Եւ դարձեալ, 'ի պատերազմելն ընդ բերդի ուրեմն, եկեալ նետ 'ի պարսպէն՝ հարկանէր զերեսն Գաբրիելի, որ կայր 'ի պարանոց նորա, և ապրէր նա յայնմանէ՝ հրեշտակային բարեխօսութեամբ։ Եւ այսպէս 'ի հաւաքեալ բարիսն՝ մնա ժամանել յերկնաւորն, հիւանդանայր զերկրաւոր կեանս, 'ի յիսներորդ երրորդ ամի կենաց իւրոց, յունուարի ամսեան 'ի քսան և հինգն. նստուց (եաղ) [2] .....

. . . . . .

յաւելեալ 'ի հայ թարգմանչէն, և պակասէն 'ի ժամանակագրութեանն Վախթանգայ, յորում փոխանակ այսոցիկ՝ դնին դարձեալք զգաւառանուանեն կրօնից հակառակ Պրոցն ուղղափառութեան, և զանլսողութենէ Հայոց՝ ձայնի Հշմարտութեան 'ի ժողովի անդ գուսարելոյ 'ի Դաւթէ։

1 Զիտաս խորհուրդ բառի ոչ իմացեալ Պրոսեայ՝ թարգմանէ Par la force de sa pensée, այս է՝ Զօրութեամբ իմացութեան իւրոյ։

2 Թերի մնայ ասա յօրինակի մերում Պատմութիւնս Վրաց՝ կամ 'ի թարգմանէն և կամ յընդօրինակողէ նորին անաւարտ թողեալ։ Վերջին բառն նատուցեալ վերաբերի առ Դեմետրէ՝ որդի Դաւթի, զոր կենդանեաւ իւրով եառ օծել Դաւթի՝ 'ի թագաւոր, ըստ օրինակի Սաղոմոնի՝ կարգելոյ յանուանակցէն իւրմէ 'ի մեծէն Դաւթէ՝ յարքայ Իսրայէլի։

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՅ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆՑ

ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ՀՌԻՓՍԻՄԵԱՅ

(Անտիպ թատերգութիւն. Հանեալ 'ի Հատաքակաց Գրատանէն Վենետկոյ)։

(Տե՛ս էջ 33, 118)։



ՉՈՐՐՈՐԴ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԿԱՐԼԷՆ, ԿԱԽԱՐԴ, ՄՈՆԹ

Կարլէն. Ո՞ւր ածես, տիկին. կարծէի յանապատ
Տեղի այս գործոց. բայց ասա Տրդատ . . . ։
Կախարդ. Չկարէ տեսանել մի երկնչիր, իշխան.
Գործ զոր խնդրես՝ ոչ է սովորական,
Որում բաւ իցէ սովորական տեղի.
Դիւրապէս շարժէի զհիմունս աշխարհի,
Եւ կարէի 'ի ծով զմեծ լերինս ձգել,

digitised by A.R.A.R.@